ՀՏԴ 82-9

Լրագրություն

Անուշ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի ասպիրանտ
E-mail: anush.dolukhanyan.91@gmail.com

Սիրանուշ ԱԴԱՄՅԱՆ
ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի «Լրագրություն» մասնագիտության IV կուրսի ուսանողուհի
E-mail: sirushadamyan21@gmail.com

ԱՐՑԱԽԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հանրության իրազեկման և իրավական մշակույթի բարձրացման, մարդու իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկման գործառույթը կարևոր դերակատարություն ունի յուրաքանչյուր ազգային հաստատության օրակարգում: Արցախի պարագայում այս գործառույթի կարևորությունն առավել ընդգծվում է՝ պայմանավորված միջազգային իրավապաշտպան հանրության պասիվությամբ, քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների սղությամբ: Այս պայմաններում հանրության իրավական մշակույթի բարձրացումը, հանրային իրազեկումը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության համար ձեռք է բերում ռազմավարական նշանակություն, որի հանրային հաղորդակցման համակարգի ուսումնասիրությունն էլ դրվել է սույն հոդվածի հիմքում:

Բանալի բառեր՝ հանրային կապեր գործիքակազմ, հաղորդակցություն, հանրային իրազեկման գործառույթ, ԶԼՄ, սոցիական մեդիա, մարդու իրավունքների պաշտպան:

A.Dolukhanyan, S.Adamyan

THE ARTSAKH HUMAN RIGHTS DEFENDER PUBLIC COMMUNICATION SYSTEM

The function of raising public awareness, legal culture, public awareness of human rights plays an important role in the agenda of each national institution. In the case of Artsakh, the importance of this

function is further emphasized due to the passivity of the international human rights community and the lack of capacity of civil society organizations. In these conditions, raising the legal culture of the society, public awareness acquires strategic importance for the institution of the Human Rights Defender, the study of the public communication system of which is the basis of this article.
Key words: Public relations toolkit, communication, public awareness function, mass media, social media, human rights defender.

А.Долуханян, С.Адамян

СИСТЕМА ОБЩЕСТВЕННОЙ КОММУНИКАЦИИ ЗАЩИТНИКА ПРАВ ЧЕЛОВЕКА АРЦАХА

Функция повышения осведомленности общественности, повышения правовой культуры и повышения осведомленности о правах человека играет важную роль в повестке дня каждого национального учреждения. В случае Арцаха важность этой функции еще больше подчеркивается из-за пассивности международного правозащитного сообщества и недостаточного потенциала организаций гражданского общества. В этих условиях, повышая правовую культуру общества, общественное сознание приобретает стратегическое значение для института Защитника прав человека, изучение системы общественных коммуникаций которого является основой данной статьи.
Ключевые слова: PR-инструменты, коммуникация, функция общественной осведомленности, СМИ, сициальная медия, защитник прав человека.

Արդի ժամանակներում մեծ թափով ընթանում են գլոբալ տեղեկատվական հասարակության կառուցակարգերի վերաձևակերպումներ, որոնք բնութագրող առանձնահատկություններն աստիճանաբար ձեռք է բերում նաև Արցախի Հանրապետությունը՝ որպես ժողովրդավար երկիր, որտեղ, իբրև հարաբերությունների կառավարման գործընթաց, առանձին դերակատարություն է վերապահվում հաղորդակցությանը՝

Հաղորդակցությունն ընկալվում է որպես տեղեկատվության փոխանակում[1]՝ հանրության հետ հետադարձ կապի ձեռքբերման նպատակով[2]:

Փարիզյան սկզբունքների հիման վրա հանրության իրավական մշակույթի բարձրացման, մարդու իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկման գործառույթը պետք է կարևոր դեր ունենա Մարդու իրավունքների ցանկացած

---

[1]*Տե՛ս **Ավետիսյան Ա.**, Հանրային կապերը զանգվածային հաղորդակցության համակարգում, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, էջ 17:*

[2]*Տե՛ս **Curran J.**, The Public Relations Handbook, USA and Canada, 2004. p.174. URL: https://7b7c5dbd-9d88-4b74-b38a-e479d21093a1.filesusr.com/ugd/46f88f 0976d60ea2ff4c1b8ddfe5fe93dfla14.pdf?index=true*

ազգային հաստատության օրակարգում[1]: Արցախի պարագայում այս գործառույթի կարևորությունն առավել ընդգծվում է՝ պայմանավորված միջազգային իրավապաշտպան հանրության պասիվությամբ, քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների սղությամբ: Այս պայմաններում հանրության իրավական մշակույթի բարձրացումը, հանրային իրազեկումը մարդու իրավունքների պաշտպանի հաստատության համար ձեռք է բերում ռազմավարական նշանակություն:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԱՀ օրենքը[2], ըստ որի՝ պաշտպանն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է նաև հրապարակայնության, թափանցիկության սկզբունքներով, ԱՀ ՄԻՊ հանրային հաղորդակցության մշակման ու իրացման օրենսդրական հիմքն է: Նույն օրենքի մեկ այլ հոդված[3] սահմանում է, որ պաշտպանն իր զեկույցներն ու հաղորդումները հրապարակում է նաև ԶԼՄ-ներով:

Ըստ ԱՀ ՄԻՊ զեկույցների, պաշտպանի հաստատությունն իր հաղորդակցական քաղաքականությունն իրականացնում է վերը նշված օրենքներին և ՄԻՊ գրասենյակում շրջանառության մեջ դրված Արցախի Հանրապետությունում պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ մամուլի ու հասարակայնության հետ աշխատանքները կանոնակարգող ուղեցույցին[4] համապատասխան, որի նպատակն է ապահովել միասնական մոտեցում մամուլի ու հասարակայնության հետ աշխատանքի համար պատասխանատու ստորաբաժանումների, անձանց՝ անկախ զբաղեցրած պաշտոնից, աշխատանքի կազմակերպման գործընթացում:

ԱՀ ՄԻՊ հանրային հաղորդակցության իրականացման հիմնական գործիքներից է պաշտոնական կայքէջը (artsakhombuds.am), որը գործարկվել է 2010 թ., վերագործարկվել՝ 2019թ.: Կայքի բովանդակությունը հասանելի է 3 լեզուներով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն: Կայքում առկա դասական տեղեկատվությունից (հաստատության պատմություն, Պաշտպանների կենսագրություն, աշխատակազմի վերաբերյալ տվյալներ, Պաշտպանի տարեկան հաղորդումներ, զեկույցներ, իրավական վերլուծություններ, օրենսդրական առաջարկներ, հաղորդագրություններ, հարցազրույցներ ու ելույթներ, հայտարարություններ ու մեկնաբանություններ, տեսադարան, օրենսդրական փաստաթղթեր, ինչպես նաև հետադարձ կապի միջոցներ, Պաշտպանին դիմելու, դիմումի ընթացքին հետևելու, հաճախ տրվող հարցերի

---

[1] *Տե՛ս ԱՀ ՄԻՊ տարեկան զեկույց, 2016թ. գործունեության մասին, Շուշի, 2017, էջ 14:*

[2] *Մարդու իրավունքների պաշտպանի մասին ԱՀ օրենքը, հոդված 3, URL: http://www.nankr.am/hy/2634*

[3] *Տե՛ս՝ նույն տեղում, հոդված 30:*

[4] *Շրջաբերական-նամակ Արցախի Հանրապետության գործադիր մարմիններին, ԼՂՀ ԱԺ, 20.04.2015, ՀՈ-31-Ն, URL: http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=7029.*

բաժիններ, կայքի քարտեզ) բացի, բացառիկ լուծումներ են տրված կայքի մատչելիությանը. այն համապատասխանեցված է «Համացանցի բովանդակության մատչելիության ուղեցույցների» կողմից հրապարակված մատչելիության միջազգային չափորոշիչներին: Կայքում պատրաստվել է մատչելիությանը նվիրված առանձին էջ, որտեղ ներկայացվում են մատչելիության հիմնական լուծումները, կանոններն ու կոճակները, ներառյալ՝ դյուրանցման ու նավարկման ստեղները, ընթերցող ռեժիմի, գունային հակադրության ռեժիմի և տառաչափերի փոփոխության կոճակները: ԱՀ ՄԻՊ-ը 2018թ. գործարկել է նաև անվճար թեժ գիծ՝ քաղաքացիների հարցերին օպերատիվ արձագանքելու նպատակով:

ԱՀ ՄԻՊ պաշտոնական կայքում հրապարակված է Պաշտպանի երկու հարցազրույց, սակայն ԶԼՄ-ներում մեր կատարած ուսումնասիրությունները փաստում են, որ Պաշտպանն ակտիվորեն համագործակցում է տեղական և հայաստանյան, մասամբ նաև՝ արտասահմանյան մեդիայի հետ, սակայն չի տեղայնացնում իր պաշտոնական կայքէջում:

ԱՀ ՄԻՊ-ը հիմնականում հանդես է գալիս տարեկան երկու մամուլի ասուլիսով, որը կրում է հաշվետու բնույթ. 1-ինը սովորաբար համընկնում է առաջին կիսամյակին, որի ընթացքում ներկայացվում է նախորդ տարվա գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը, նախանշվում կատարվելիք աշխատանքները, երկրորդը՝ տարվա երկրորդ կիսամյակում, որն ամփոփում է տվյալ տարում կատարված աշխատանքները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Պաշտպանը հազվադեպ կազմակերպում է արտահերթ ասուլիսներ, մասնավորապես, 2019թ. Երևանում կայացած ասուլիսում ԱՀ ՄԻՊ-ը ներկայացրել է իր Ստրասբուրգյան այցի արդյունքները[1], 2017թ-ին ԱՀ ՄԻՊ-ը 1-ին անգամ Եվրախորհրդարանում հանդես եկավ մամուլի ասուլիսով՝ ԵԽ պատգամավոր Ֆրանկ Էնգելի հետ, որում անդրադարձավ 2016թ-ի Ապրիլյան պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների խախտումներին[2]:

Հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների դեպքերում հանդես է գալիս նաև արտահերթ հրապարակային զեկույցներով, որոնք Պաշտպանը հրապարակում է նաև ՄԻՊ կայքէջում. առ այսօր հրապրակվել է 15 տարեկան հաղորդում, 15 արտահերթ զեկույց:

Արցախյան 44-օրյա պատերազմով պայմանավորված՝ Պաշտպանը հրապարակել է 9 արտահերթ զեկույց (այդ թվում՝ անգլերեն), որտեղ

---

[1] *Ժամանակն է, որ Արցախում ավելի ամրանա քաղաքացիական հանրությունը. Արտակ Բեգլարյան, URL: https://www.youtube.com/watch?v=irAZ9YT0wY4&t=1400s:*

[2] *Պատմական օր Արցախի համար. ԼՂՀ ՄԻՊ-ն ասուլիս է տվել Եվրախորհրդարանում, URL: https://www.youtube.com/watch?v=5AbAAjiwOv0:*

արտացոլված են Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Արցախի բնակչության, պատերազմը լուսաբանող լրագրողների նկատմամբ, Ադրբեջանի կողմից Արցախի բռնազավթված տարածքներում վանդալիզմի դրսևորումների, հայատյաց վարքի, զանգվածային ոչնչացման զենքի օգտագործման և այլ հանցագործությունների մասին զեկույցներ:

ԱՀ ՄԻՊ-ը ճեպազրույցներով հանդես է եկել միայն 2020թ. Արցախյան 2-րդ պատերազմի ընթացքում. կազմակերպվել է 7 ճեպազրույց, որի ընթացքում ներկայացվել է ՄԻՊ աշխատակազմի փաստահավաք առաքելության շրջանակներում իրականացվող աշատանքի արդյունքները:

ԱՀ ՄԻՊ պաշտոնական կայքէջում 2016-21թթ. ընթացքում հրապարակված հաղորդագրությունները, հայտարարություններն ու մեկնաբանությունները, հարցազրույցներն ու ելույթներն ըստ տարիների հետևյալ թվային պատկերն ունեն (Աղյուսակ 1): ԱՀ ՄԻՊ-ը ներկայացված է ամենամեծ օգտահաշիվներ ունեցող Facebook (2013թ.), Twitter (2016թ.), YouTube (2018թ.), Ինսթագրամ (2018թ.) սոցիալական մեդիահարթակներում: Ֆեյսբուքյան ու թվիթերյան էջերը պաշտոնական վավերացում են ստացել 2019թ. ՝ համանուն սոցիալական ցանցերի կենտրոնների կողմից[1]:



ԱՀ ՄԻՊ-ի YouTube-յան էջն ունի ընդամենը 208 հետևորդ: Էջը հիմնականում պասիվ է լինում. առ այսօր հրապարակվել է 57 տեսանյութ, որից միայն 12-ն են վերաբերում Պաշտպանի գործունեությանը՝ մամուլի ասուլիսներ, կոչեր՝ ուղղված միջազգային կառույցներին, իսկ մյուսները Պաշտպանի կոմից կազմակերպված մրցույթների վերաբերյալ ու հասարակության իրավա-գիտակցության մակարդակը բարձրացնող տեսանյութեր են: Դիտումների քանակը հիմնականում լինում է 150-ի սահմանում, իսկ պատերազմի ժամանակ հրապարակված 3 տեսանյութինը՝ 1700-ի սահմանում:

Ֆեյսբուքյան էջն ունի ավելի քան 30 հազար հետևորդ: Էջում հրապարակվում են Պաշտպանի գործունեության մասին տեղեկություններ՝ հանդիպումներ, կոչեր, ուղերձներ, մեկնաբանություններ և այլն: 2020թ. արցախյան պատերազմի

[1] *ԱՀ ՄԻՊ տարեկան զեկույց, 2019թ. գործունեության մասին, 2020, էջ 174:*

ընթացքում, իրազեկման միջոցառումների շրջանակում, Պաշտպանն իր պաշտոնական ֆեյսբուքյան էջում մեկնարկել է «Don't be blind» (Կույր մի՛ եղիր) արշավը[1], որում տեսաուղերձների միջոցով նա պարբերաբար ներկայացնում էր ադրբեջանական զինված ուժերի կողմից քաղաքացիական օբյեկտներին նպատակային թիրախավորման վայրերն ու դրա հետևանքները: Տեսանյութերը հրապարակվել են նաև թվիթերյան, յութուբյան էջերով: ԱՀ ՄԻՊ-ը Ֆեյսբուք սոցիալական ցանցում ունի նաև խումբ (Արցախի մարդու իրավունքների պաշտպանության խումբ, 2020թ.), որը ստեղծվել է Պաշտպանի հաստատության և քաղհասարակության միջև կանոնավոր կապն արդյունավետ դարձնելու համար[2]. այն ունի 133 անդամ: Խմբում արված հրապարակումներին հիմնականում արձագանքներ չեն լինում:

ԱՀ ՄԻՊ-ի Twitter-յան էջն ունի մոտ 20 հազար հետևորդ: Այն մշտապես ակտիվ է լինում, ինչն առանձնահատուկ կարևորություն ունի, քանի որ այս հարթակը ծառայում է որպես միջազգային հանրությանը Ադրբեջանի կողմից Արցախի բնակչության իրավունքների ոտնահարման, Արցախի գրավյալ տարածքներում վանդալիզմի դրսևորումների մասին իրազեկելու գործիք: 2019թ. սեպտեմբեր-2020թ. սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում հրապարակումների թիվը կազմել է 28, իսկ 2020թ. սեպտեմբեր-2021թ. սեպտեմբեր հատվածում՝ 197, որից 132-ը՝ պատերազմի ընթացքում, 65-ը՝ պատերազմին հաջորդող ամիսներին, ինչը փաստում է, որ պատերազմն ու դրա հետևանքները էապես փոխել են Պաշտպանի հաղորդակցական քաղաքականությունը սոցիալական ցանցերում. Ֆեյսբուքում ակտիվության նվազմանը զուգահեռ՝ մեծացել է ակտիվությունը Թվիթերում:

ԱՀ ՄԻՊ-ը հանրային հաղորդակցություն է իրականացնում նաև իր թվիթերյան ու ֆեյսբուքյան անձնական էջերի միջոցով, որտեղ կիսվում է իր գործունեության մասին հրապարակումներով, ինչպես նաև կոչեր է հղում միջազգային հանրությանը:

ԱՀ ՄԻՊ-ը հանրային հաղորդակցության շրջանակներում հանդես է գալիս նաև նախաձեռնություններով, մասնավորապես, 2019թ. Պաշտպանը, Արցախի հանրային հեռուստաընկերության հետ մեկտեղ, նախաձեռնել է «Իրավատերը» հեռուստահաղորդումը, որը եթեր է հեռարձակվում յուրաքանչյուր ամիս: Այն նպատակ ունի բարձրացնել մարդու իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը, ձևավորել ու ամրապնդել համընդհանուր հարգանքի մշակույթ մարդու իրավունքների նկատմամբ և առավել մատչելի ու

---

[1] *«Artak Beglaryan's call on the Azerbaijani war crimes», URL: https://www.facebook.com/189042481262922/videos/424282641868106:*

[2] *ԱՀ ՄԻՊ Ֆեյսբուքյան խումբ, բաժին՝ տեղեկատվություն, URL: https://www.facebook.com/groups/HumanRightsInArtsakh/?ref=share*

թափանցիկ դարձնել Պաշտպանի հաստատության գործունեությունը, իսկ 2018թ. Պաշտպանը հայտարարել է լուսանկարների ու տեսանյութերի մրցույթ՝ «Մարդու իրավունքներն իմ աչքերով» խորագրով՝ նվիրված ԱՀ Սահմանադրության 12-րդ և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 70-րդ տարեդարձներին[1]:

ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանը, ըստ էության, կառուցել է հաջող հանրային հաղորդակցության համակարգ: Չնայած իր գործունեության ողջ ընթացում Պաշտպանը փաստացի առաջնորդվել է հաշվետվողականության, թափանցիկության, հանրային իրազեկման մակարդակի բարձրացման սկզբունքով, այնուամենայնիվ այն որակական և քանակական նոր որակ է ստացել 2020թ. սեպտեմբերի 27-ի Ադրբեջանա-թուրքական տանդեմի կողմից սանձազերծված 44-օրյա ռազմական ագրեսիայի ընթացքում և դրանից հետո:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

[1] *«Երեխաների իրավունքներն իմ աչքերով» խորագրով լուսանկարների և տեսանյութերի մրցույթ՝ ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից, URL: https://artsakhombuds.am/hy/news/310:*